ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թվականի N 1

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով.

Որոշում եմ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնքի կողմից վիճակագրական ծառայություն ներկայացվող բոլոր տեսակի հաշվառումների և հաշվետվությունների ներկայացման համար ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. Հաշվառման աշխատանքներին մասնակից դարձնել նաև համապատասխան ծառայությունների մասնագետների:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ

Հայաստանի Հանրապետության

Արմավիրի մարզի Գայ համայնքի

ղեկավարի 2020 թվականի հունվարի

9-ի թիվ 1 որոշման

Հանձնաժողովի կազմը

Հանձնաժողովի նախագահ--Խուրշուդ Քոչարյան

Հանձնաժողովի անդամ-- Աննա Թադևոսյան

Հանձնաժողովի անդամ--Արփիկ Ինջիղուլյան

Հանձնաժողովի անդամ---Մարինե Կոստանյան

Հանձնաժողովի անդամ---Վարդան Վարդանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թվականի N 2

ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետով, հիմք ընդունելով Գայ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 56 որոշումը և Վազգեն Նահապետյանի 2020 թվականի հունվարի 8-ի դիմումը.

Որոշում եմ

1.Արմավիրի մարզի Գայ համայնքի բնակիչ Վազգեն Նահապետյանին տալ հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվություն:

2.Սահմանված կարգով իրականացնել նախատեսված տեղական տուրքի վճարում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թվականի N 3

ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով,Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Նորոշմամբ և հիմք ընդունելով Արմեն Խաչատրյանի 2020 թվականի հունվարի 30-ի դիմումը.

Որոշում եմ

1.Արմավիրի մարզի Գայ համայնքի վարչական տարածքի 12 փողոց թիվ 1 հասցեում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող 0.112 հա հողատարածքից /ԿԾ 04-033-0004-0021/առանձնացված 250 քմ մակերեսով հողատարածքին տալ հասցե՝ 12 փողոց թիվ 1/3:Մնացածի հասցեն թողնել նույնը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

17 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թվականի N 1

ԳԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետովև Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 7-րդ կետի 1-ին ենթակետի <<ա>> և <<բ>> պարբերությունների և 20-րդ կետի պահանջներով.

Կարգադրում եմ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայի համայնքապետարանի կարիքների համար 2020 թվականի գնումների համակարգման ծառայությունների ձեռքբերման պատասխանատու ստորաբաժանում համարել Գայի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ա. Թադևոսյանին:

2.Գործընթացի կազմակերպման գնումների համակարգող համարել Գայանե Հակոբյանին :

3.Պատասխանատու ստորաբաժանմանը և գնումները համակարգողին ՝ գնման գործընթացը կազմակերպել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

4.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

22 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թվականի N 2

ԳԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 7-րդ կետի 1-ին ենթակետի <<ա>>և <<բ>> պարբերությունների և 20-րդ կետի պահանջներով.

Կարգադրում եմ.

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայի համայնքապետարանի կարիքների համար 2020 թվականի աշխատանքների , ծառայությունների և ապրանքների ձեռքբերման պատասխանատու ստորաբաժանում համարել՝

1) Աշխատանքների ձեռքբերման համար՝Գայ համայնքի ղեկավարի տեղակալ Խուրշուդ Քոչարյանին

2) Ծառայությունների ձեռքբերման համար՝Գայի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Աննա Թադևոսյանին

3) Ապրանքների ձեռքբերման համար՝Գայի համայնքապետարանի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ Անահիտ Տերտերյանին:

2.Գործընթացի կազմակերպման գնումների համակարգող համարել Ա/Ձ Յողիկ Ռուդիկի Առաքելյանին:

3. Պատասխանատու ստորաբաժանմանը և գնումները համակարգողին՝ գնման գործընթացը կազմակերպել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

4.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ**